«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ Առակները՝ բարոյական արժեքների ուսուցման միջոց

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Եղիազարյան Նաիրա

Ուսումնական հաստատություն՝ ք. Աբովյանի Վ. Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն 3

Ինչ է արժեքը 4

Բարոյական արժեքներ 5

Ի՞նչ է առակը 8

Առակների բարոյախրատական նշանակությունը 11

Եզրակացություն 18

Օգտագործված գրականության ցանկ 20

Ներածություն

Գրականությունը ապագա անհատի և քաղաքացու արժեքային համակարգը ամբողջացնելու, առավելապես գեղագիտական դաստիարակության անսահման հնարավորություններ է տալիս: Այդ նպատակին ծառայում են նաև առակները, որոնց ուսուցումը և դրանց ուսուցմամբ գրական ունակությունների զարգացումը լավ հիմք, հենման հարթակ կարող են դառնալ ուսուցչի համար հանրակրթական դպրոցում դաստիարարկչական բեղմնական աշխատանք իրականացնելիս: Նշենք, որ աշակերտների մեջ համամարդկային հատկանիշները մշակելու և զարգացնելու գործընթացները չպետք է կապված լինեն միայն գեղարվեստական բնագրերի ուսումնասիրության հետ: Այդ գործընթացները տևական և բազմաբնույթ աշխատանք են պահանջում: Այդ աշխատանքի կարևոր օղակներից մեկն էլ ստեղծագործական ինքնուրույն փորձերի խրախուսումն է, մասնավորապես՝ իր իսկ կողմից ստեղծագործված առակի միջոցով արտահայտել սեփական դիտարկումներն ու մտորումներն աշխարհի մասին, ինչպես նաև հանդես գալ այլաբանական հակիրճ խոսքով, զատել միմյանցից իրականն ու այլաբանականը՝ տարբերակելով գլխավորը երկրորդականից:

Հետազոտական ախատանքի նպատակները.

Ներկայացնել՝

- ինչ են արժեքը և բարոյական արժեքները
- գրականության առանցքային դերը արժեքների ուսուցման հարցում
- առակների դերը բարոյական արժեքների ուսուցման գործընթացում

Հետազոտական ախատանքի խնդիրները

- վեր հանել բարոյական արժեքների ուսուցման կարևորությունը
- բացահայտել գրականության և բարոյական արժեքների կապը
- լուսաբանելով առակները՝ ներկայացնել բարոյական արժեքները

Ինչ է արժեքը

Արժեքն աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա: Մշակույթը խիստ կապված է մարդու արժեհամակարգի հետ: Նեղ իմաստով՝ արժեքը մարդու համար իրի, առարկայի կամ երևույթի դրական նշանակությունն է, մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշ է, որի կարևոր կատեգորիաներից են ՝ հավատն ու սերը: Հավատը ծնում է հույս և մղում մարդուն ապրելու, ստեղծելու, արարելու: Հավատը դառնում է կողմնորոշիչ մարդու կյանքի և գործունեության համար: Մարդիկ քանի դեռ ապրում են՝ հավատում են, քանի դեռ հավատում են՝ ապրում են: Սերը մյուս մարդկանց հետ միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները, մարդն ավելի պահանջկոտ է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման: Ահա թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է: Հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը, հատկապես երբ կապվում է բարու և գեղեցիկի հետ:

Արժեքները բավարարում են սուբյեկտի կենսական պահանջմունքները և իմաստավորում են կյանքը: Սուբյեկտի արժեքները միավորվելով կազմում են մի ամբողջական համակարգ: Անձի մասին կարելի է դատել նրան առավել բնորոշ արժեքներով, որոնց լավագույնս դրսևորվելու համար անհրաժեշտ է բարոյական արժեքների կրումը:

Բարոյական արժեքներ

«Բարոյական արժեք» ասելով՝ հասկանում ենք այն վեհ գաղափարները, պատվիրանները, ուսուցումները, որոնք ապահովում են մարդու բարոյական, առաքինի կյանքն ու նկարագիրը: Այլ կերպ ասած՝ բարոյական արժեքները գաղափարներ և համոզմունքներ են, որոնք մարդիկ ունենում են այն մասին, թե ինչն է ճիշտ և ինչն է սխալ: Ասում են, որ մարդն ունի բարոյական արժեքներ, երբ ունի սովորույթներ և նորմեր, որոնք համարվում են դրական և լավ ուրիշների բարեկեցության համար:

Բարոյական արժեքները և, ընդհանուր առմամբ, արժեքների ամբողջ շրջանակը, ունեն մի շարք ընդհանուր հատկություններ, որոնք հեշտությամբ կարելի է ճանաչել՝ արժեքները տարբերելու վարքային այլ ձևերից: Այս բնութագրերի համապատասխանությունը սովորաբար շատ ակնհայտ է, բայց պարտադիր չէ, որ բոլորը բավարարվեն՝ ստանդարտ որպես արժեք դիտարկելու համար: Այս հիմնական բնութագրերը հետևյալն են: Դրանք կապված են մարդու հիմնարար հույզերի հետ: Բարոյական արժեքները բնութագրվում են, քանի որ դրանք անմիջականորեն կապված են մարդու էական հույզերի հետ: Այս կատեգորիայի մեջ կան սեր, հավատարմություն, մեղավորություն և զայրույթ: Վերացական են՝ Դա այդպես է, քանի որ դրանք մտավոր կառուցվածքներ են, որոնք սկսվում են իրերի մեկնաբանությունից՝ հաշվի առնելով անհատի մշակութային շրջանակը և նրանց սեփական կյանքի փորձը: Դրանք կարևոր են Վարքի այս օրինաչափությունները թույլ են տալիս մեզ «լավը» «վատից» տարբերել՝՝ դրանով իսկ իմաստ տալով բուն կյանքին և հետապնդելով մարդկանց գերազանցումը: Դրանք անհատական են և կոլեկտիվ Չնայած դա հակասական է թվում, կան որոշակի արժեքներ, որոնց դրսևորումը կլինի հավաքական, իսկ մյուսները ավելի անհատական տեսլական՝ ըստ յուրաքանչյուր անհատի տեսակետի: Նրանք հիերարխիկ են Բարոյական արժեքներն աշխատում են առաջնահերթ կառուցվածքով, քանի որ յուրաքանչյուր մարդ և յուրաքանչյուր հասարակություն դրանք կազմակերպում է ըստ

իրենց կարևորության՝ բուրգի գագաթին դնելով նրանց, ովքեր առավել կարևոր են գործողությունների և վերաբերմունքի կազմաձևման համար։ Արժեքները մարդկանց և հասարակությունների էվոլյուցիայի և հասունության գործընթացի արդյունք են։ Ահա թե ինչու դրանք հիմնարար տարրեր են ժողովրդի մշակույթի սահմանադրության մեջ։ Դրանք կարող են տարբեր լինել ըստ յուրաքանչյուր մշակույթի։ Հաշվի առնելով դրանց պատմական առանձնահատկությունները՝ բարոյական արժեքները տարբեր են կախված այն հասարակությունից, որտեղ դրանք արտահայտվում են։ Չնայած կան ընդհանուր տարրեր, բայց յուրաքանչյուր մշակույթ զարգացնում է իր պատկերացումները, թե ինչն է ճիշտ կամ սխալ, և այդ հասկացություններից կառուցվում է բարոյական արժեքների համակարգ, որը դրան արձագանքում է։ Բարոյական արժեքների ձևավորումը։ Ժամանակի ընթացքում անհատի կամ հասարակության արժեքային շրջանակը աստիճանաբար կառուցվում է։ Սա նշանակում է, որ դրանք նախշեր չեն, որոնք ապրում են անհատների գենետիկ կոդում, այլ ավելի շուտ, որ դրանք մոդելավորում են ամբողջ կյանքի ընթացքում փորձի կուտակմամբ։ Այս իմաստով բարոյական արժեքները փոխանցվում են սերնդեսերունդ, ինչը կարևորվում է կրթության կարևորությունը ինչպես ընտանիքի ներսում, այնպես էլ դպրոցական միջավայրում, քանի որ երկու միջավայրերն էլ հանդիսանում են հիմնական ուսուցման օղակները (մարդիկ)։ Բարոյական արժեքների օրինակներ։ Բարոյական արժեքներն այն վարքագիծն են, որը մարդուն ապահովում է կյանքի զգացողությամբ, որով նա ձգտում է կատարելագործել իր մարդկային որակներն ու արժանապատվությունը, ուստի որոշ արժեքների կամ այլ արժեքների կից կյանք վարելը անհատական և ազատ որոշում է։ Արժեքները զոյակցում են անհատների մեջ, և ներքին բախումներ կարող են առաջանալ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրին տրված կարևորությունը։

Բարոյական արժեքների կարևորության մասին՝

1. օգնում են ձևավորել դրական բնավորության գծեր. կարեկցանք, հարգանք, բարություն, խոնարհություն և այլն։

2. նպաստում են,որ երեխան կարողանա տարբերակել ճիշտը սխալից, լավից և վատից: Ի վերջո, սա նպաստում է ռացիոնալ մտածողության և շրջապատող աշխարհի վերաբերյալ օբյեկտիվ դատողության զարգացմանը:
3. ձևավորում են երեխայի տեսակետը, կյանքի տարբեր կողմերի վերաբերյալ վերաբերմունքի և համոզմունքների համակարգ:
4. բարձրացնում են երեխայի ինքնավստահությունը և օգնում նրան լավատես մնալ նույնիսկ դժվարին իրավիճակներում:
5. հանդիսանում են որպես ուղեցույց, որն օգնում է երեխային խուսափել հասակակիցներից, սոցիալական ցանցերից կամ ընդհանուր առմամբ հասարակության բացասական ազդեցությունից, քանի որ նրանք մտնում են պատանեկություն և հասուն կյանք:
6. նպաստում են սոցիալական կյանքի բարձր չափանիշների հաստատմանը, որոնք օգնում են հասարակության զարգացմանը որպես ամբողջություն: Վաղ մանկությունից մինչև հասուն տարիքը ընտանիքը նպաստում է երեխայի բարոյական զարգացմանը:

Ի՞նչ է առակը

Առակը չափածո կամ արձակ փոքրածավալ ստեղծագործություն է, որն ունի այլաբանական իմաստ և բարոյախրատական բովանդակություն: Այն բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության հոռի և բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն:Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը: Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է: Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները:

Առակներն այժմ էլ պատմվում և պահպանվում են ժողովրդի մեջ: Նշանավոր առակագիրներ են ֆրանսիացի Ժան դը Լաֆոնթենը և ռուս Իվան Կռիլովը: Հայ գրականության մեջ առակներ են գրել նաև Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Խնկո Ապերը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Կորյունը և ուրիշներ:

Առակագիրները ոչ թե սովորական ձևով պատմում են, այլև ներկայացնում, կենդանագրում, մանրամասներով ստեղծում ամբողջի տեսանելի պատկերը: Կատարվում է հիմնականում ծաղրող այլաբանական ասելիքի խտացում,

բարոյախոսության առանձնացում և ընդգծում: Առակագիրը կարողանում է բնականորեն վերարտադրել հոգեվիճակն ու զգացողությունը՝ ստեղծելով գեղարվեստական արձակի պատում, մշտապես արդիական խոսքի կշռույթ, ինքնատիպ մտածողություն: Առակներում հերոսների բնավորության և վարքի յուրօրինակ կաղապարներում առակագիրների կողմից առաջադրվող աշխարհի բացահայտ պայմանական ձևերը կողմնորոշում են նաև առակի բնույթը: Արտաքին իրադարձային շերտի ներքո նկարագրվող երևույթը պայմանավորում է նյութի խորքային բնութագիրը, ինչի արտացոլումն է նաև բնավորության և կեցության միահյուսումը: Հետազոտելով ժամանակի գոյի տարբեր հայեցակետերը՝ կարելի է որակապես վերաիմաստավորել առասպելավարժության գեղագիտական գլխավոր սկզբունքները՝ նոր բովանդակությամբ լիցքավորելով աշակերտ-հասարակություն-աշխարհ-բնավորություն կապերը: Ի վերջո ըմբռնելով առակի կառուցվածքը՝ աշակերտը կկարողանա ընկալել ենթատեքստը, փոխաբերական, այլաբանական իմաստները, ինչպես նաև առակի լեզառճական առանձնահատկությունները: Առակագրության և առակագիտության նոր շերտերի բացահայտմամբ առակների կառույցում ներդաշնակորեն տեղադրվել են այնպիսի աննախադեպ դրսևորումներ, ինչպիսիք են խոհական լիցքը, այլաբանական խոսքը, բարոյական ըմբռնումները, որոնք գալիս են ներկայացնելու մարդ անհատին իր բարդ և ոչ միանշանակ էությամբ: Ավանդականի և արդիականի փոխհարաբերություններում առակի կառույցում ժամանակի շունչը զգացող և նուրբ դիտողականությամբ առաջադրված հրատապ գաղափարադրույթներ են արծարծվում: Կյանքի առանձին կողմերի պատկերմանը հարակցվում են հասարակական աղերսներում մարդ անհատի բարոյահոգեբանական կերպարի դրսևորումները՝ ընդգծելով բարոյական ճշմարիտ արժեքները և առանձնացնելով առակի ուսուցման կարևորությունն ու անհրաժեշտությունը ժամանակային հոլովույթում:

Արդի կրթական համակարգում ազգային և համաշխարհային մշակութային, մասնավորապես գրական արժեքների սերմանումը, դրանց փոխանցումը աճող սերնդին

դիտարկվում են որպես նրանց ձևավորվող արժեհամակարգի կարևոր բաղադրիչ: Երեխաների արժեհամակարգի ձևավորման գործընթացում մշակութային արժեքների ձեռբերումը վերջիններիս ստեղծագործական բազմազան կարողությունների զարգացման աներկբա երաշխիք է, որն օգնում է նրանց կառուցելու աշխարհի սեփական պատկերը, մշակութային բազմազանության համայնապատկերում կողմնորոշվելու, պահելու և պահպանելու ազգայինը, պատրաստ լինելու մշակութային կառուցողական երկխոսության: Այսօր ունենք հրամայական՝ դաստիարակելու հայ քաղաքացի, քաղաքական առաջնորդ, ինչպես նաև հզորացնելու պետությունը՝ այս գործին ծառայեցնելով կրթական և մշակութային համակարգը: Մշակույթը, գրականությունը, աշակերտի արժեհամակարգի ձևավորման կարևոր բաղադրիչներ լինելով, ուղղակիորեն կանխորոշում են նրա՝ որպես անհատի ձևավորումն ու զարգացումը: Սակայն ժամանակակից դպրոցը ոչ միշտ է բավարարում աշակերտի կարիքները գեղագիտական ոլորտներում: Խնդիրն առավել ակնհայտ է դառնում երեխաների ստեղծագործական, քննադատական մտքի զարգացման և դրսևորման թիրախային դիտարկման ժամանակ: Մարդու կողմից ստեղծված գրական արժեքներին հաղորդակից լինելը դրական ազդեցություն է թողնում երեխաների ստեղծագործական, գեղագիտական մտքի զարգացման վրա, մոտիվացնում է նրանց վարքագիծը, ապահովում է երեխաների և հասարակության միջև կայուն հարաբերությունները: Շիրակի մարզի թվով 15 սահմանամերձ դպրոցներում անցկացված հարցումների արդյունքում պարզվել և ընդգծվել է գեղագիտական և բարոյագիտական դաստիարակության կարևորությունը՝ առանձնացնելով առավելապես գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողությունների զարգացման անհրաժեշտությունը գրականության, մշակույթի, արվեստի արժեքներին առնչակից լինելու միջոցով:

Առակների բարոյախրատական նշանակությունը

Առակի մեջ գաղտնագրված գաղափարները, բարոյական սկզբունքները, մարդկայինի մասին պատկերացումները ժողովրդի հավաքական կենսափորձով վավերացված մշտնջենական արժեքներ են, որոնք յուրաքաչյուր դարաշրջանում ընկալվում և իմաստավորվում են նորովի: Բացառություն չէ, իհարկե, մերօրյա իրականությունը: Հանկարծադեպ ու անակնկալ փոփոխություններն առաջացրել են բարոյական սկզբունքների, սոցիալական հարաբերությունների հախուռն արժեզրկում, նոր արժեքների նույնքան հախուռն ներխուժում կեցության տարբեր ոլորտներ: Անցումային շրջանի այս անխուսափելի երևույթներն իրենց ազդեցությունն են թողել աշակերտների հատկապես մտածողության, հոգեբանության, հուզաշխարհի վրա: Ուսուցչի խնդիրը պետք է լինի ժամանակի հետ կապված փոփոխության ձևերի մեջ մշտական արժեքների գոյակերպը նշմարելը, դրա հետ հաղորդակցվելու ուղիների միջոցները, նաև ընթերցող աշակերտներին գտնելը: Չմոռանանք նաև, որ անհատի արժեքների համակարգում մարդու լիակատար ու բովանդակալից կենսակերպը պայմանավորող շատ նախադրյալների շարքում վճռորոշ նշանակություն ունի գեղեցիկի զգացողությունը: Մարդկային մտածողության փոփոխության հետ փոխվում են նաև մարդու ճանաչողության սահմանները՝ եզրագծված ժամանակի և տարածության մեջ: Վերաիմաստավորման են ենթարկվում մարդու պատկերացումները շրջապատող աշխարհի վերաբերյալ: Եվ այդ համատեքստում առավելապես ակնհայտ է ուրվագծվում գեղեցիկի հասկացությունը: Առավել ևս այն պարագայում, որ հասարակական զարգացման, աշխարհաճանաչման ամենատարբեր փուլերում այս հասկացությունը տարբեր մեկնություններ է ունեցել՝ սկսած աստվածային կամքի արտահայտությունից, սուբյեկտիվ էությունից, մինչև «բնության մոտ լինելը կամ բնությանը նմանվելը»: Դպրոցահասակի մտածողությունն առարկայական է, ամեն ինչ նա ուզում է տեսնել, զգալ սեփական փորձով. լինի դա իրապես, թե երևակայությամբ:

Այդ պատճառով էլ գեղեցիկի մասին ուսուցչի զրույցները չպետք է դուրս գան առարկայական ոլորտից, պետք է ուղեկցվեն կյանքից կամ գրականությունից քաղված շոշափելի օրինակներով: Այս դիտանկյունից շատ կարևոր է դպրոցում առակագրության ուսուցումը, ուսուցչի կողմից աշակերտներին միջնադարյան դպրոցներում դասավանդվող «Առասպելավարժություն» առարկայի դասավանդման հնարներին ու հնարավորություններին համահունչ: Առակների ուսուցման միջոցով հնարավոր է դառնում խթանել երեխաների և պատանիների գեղագիտական դաստիարակությունը, նպաստել նրանց քննական վերլուծության, ստեղծագործական և քննադատական մտածողության, համապատասխան գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, գեղեցիկը տեսնելու, զգալու և կերտելու ունակությունների ձևավորմանն ու զարգացմանը:

Տարբեր ժամանակներում բարոյականության վերաբերյալ տարբեր կարծիքներ են հնչել, և ստեղծվել են տարբեր տեսություններ: Մենք դպրոցում ուսումնասիրում ենք այդ տեսություններից երեքը՝ Արիստոտելի առաքինությունների տեսությունը, Կանտի պարտքի տեսությունը և բարոյական օգտապաշտությունը: Դրանցից որն է ինձ ավելի հոգեհարազատ՝ դուք կտեսնեք իմ ընտրած առակների վերլուծության ընթացքում: Այդ առակներն են Եզոպոսի «Ուղևորներն ու սոսին», ինչպես նաև «Եղջերուն և խաղողի թուփը»:

Եզոպոս

Ուղևորներն ու սոսին

Ամառվա մի օր ուղևորները, կեսօրվա շոգից սաստիկ հոգնած, ճանապարհ էին գնում: Նրանք տեսան սոսին, մոտեցան և պառկեցին նրա ստվերում՝ հանգստանալու:

Նայելով սոսու ոստրերին՝ իրար մեջ խոսեցին.

-Բայց ախր անպտուղ է այդ ծառը և մարդկանց համար՝անօգուտ:

Սոսին նրանց պատասխանեց.

- Ապերախտ եք դուք, իմ հովանուց օգտվում եք և տեղնուտեղն էլ ինձ անպտուղ և անօգուտ անվանում:

Այդպես էլ որոշ մարդկանց բախտը չի բերում. նրանք լավություն են անում մերձավորներին, բայց շնորհակալություն չեն ստանում:

Եղջերուն ու խաղողը

Եղջերուն, որսորդներից փախչելով, թաքնվեց խաղողի այգում: Որսորդներն անցան կողքով, և եղջերուն վճռեց, որ այլևս չեն նկատի իրեն, կրծոտեց խաղողի տերևները: Բայց որսորդներց մեկը շուռ եկավ, նկատեց նրան, մնացած տեգով նշան բռնեց և վիրավորեց եղջերվին: Եվ զգալով մոտալուտ մահը՝ եղջերուն հառաչելով ինքն իրեն ասաց. «Տեղս է, խաղողի վազն ինձ փրկեց, իսկ ես ոչնչացրի այն»:

Առակս կարելի է վերագրել այն մարդկանց, ովքեր նեղացնում են իրենց բարերարներին, որի համար և Աստված պատժում է նրանց:

Երկու առակներում էլ հիմնական միտքը մարդու՝ արած լավ գործի համար երախտագիտության զգացում ունենալն է: Իմանուիլ Կանտի տեսության մեջ, որը բարոյագիտության մեջ հայտնի է որպես ***<< պարտքի բարոյականության>> ուսմունք,*** ասվում է, որ մարդու արարքը բարոյական է, եթե դրա շարժառիթը պարտքի զգացումն է այլ մարդու նկատմամբ: Եթե մարդն առանց շահի և շարժառիթի մարդկանց բարություն է անում, դա է իսկական բարոյականությունը: Այս երկու առակների դեպքում մենք հանդիպում ենք այդպիսի կերպարների՝ սոսիին և խաղողի թփին, որոնք առանց ճանաչելու կամ սիրելու ուղևորներին և եղջերուին օգնեցին նրանց: ***Ըստ Արիստոտելի առաքինությունների տեսության***՝ մեր հերոսները՝ սոսին և խաղողի թուփը, առաքինությունների կրող են, որովհետև նրանք բարի գործ են անում՝ ելնելով միայն ու միայն իրենց ներքին մղումից, այլ ոչ թե ինչ-որ պարտադրանքներից: Իսկ ահա ուղևորները և եղջերուն ամենևին առաքինի չեն, որովհետև նրանց գործողություններում մենք միայն շահադիտական քայլեր ենք տեսնում: Խոսելով ***բարոյական արժեքներից***՝ կարելի է ասել, որ այս երկու առակներում էլ կան բարոյական արժեքների բախումներ, օրինակ <<Եղջերուն և խաղողի թուփը>> առակում իրար են բախվում ***բարին***՝ ի դեմս խաղողի, և ***չարը*** ՝ ի դեմս երախտամոռ եղջերուի:

Այս առակներում կան նաև ***պարտքի և խղճի***՝ որպես բարոյական արժեքների դրսևորումներ: Խաղողը ***պարտքի*** կրողն է: Նա իր ***բարոյական պարտքն*** է համարում օգնել եղջերուին, այնպես, ինչպես սոսին իր բարոյական պարտքն է համարում օգնել հոգնած ուղևորներին: Եղջերուն, իհարկե, ի տարբերություն երախտամոռ ուղևորների, վերջում գիտակցում է իր արարքի անբարոյականությունը և խղճի խայթ զգում, ինչպես ասում էր ***Խրիմյան Հայրիկը. «Խիղճը հաշվեպահպան ոստիկան է, որն իբրև դատավոր, սրտի աթոռի վրա բազմած, խայթահարում է միշտ»:*** Այս դեպքում իսկապես խիղճը խայթահարեց եղջերուին, և նա հասկացավ իր արարքի անթույլատրելիությունը: Որքանով էին առաքինի մեր հերոսները՝ կարելի է եզրակացնել նրանց կատարած արարքներից, քանի որ ինչպես գիտենք, ***բարոյականությունը արարք է, վարքագիծ***: Այս դեպքում առաքինի կարող ենք համարել սոսիին և խաղողի թփին, որոնք անշահախնդրորեն օգնում են կարիքի մեջ գտնվողին: Իմ կարծիքով այսօր ևս այս մոտեցումն արդիական է, և առաքինի մարդուն կարելի է ճանաչել իր կատարած գործերով:

Երեխայի, ինչպես և մեծահասակների մեջ հավատքի և բարոյական արժեքների ամրապնդման համար մեծ դեր ունի Սուրբ Գրքի ընթերցանությունը, որը հոգևոր շահ է բերում մարդկանց, և փոխակերպում ու դարձնում առավել լավը, որովհետև այդպիսին է Աստծո խոսքի զորությունը: Քրիստոս ևս ասում է. «Միայն հացով չի ապրի մարդ, այլ այն ամեն խոսքով, որ դուրս է գալիս Աստծու բերանից» (Մատթ. 4.4, Ղուկ. 4.4):

https://youtu.be/9kuqwZs5ns8

Ավետարանում շատ առակներ են ներկայացված, որոնք մեզ սովորեցնում են լինել ազնիվ, ճշտորեն կատարել մեզ հանձնարարված գործերը, չթաղել մեր ունակությունները, այլ դրանցով ծառայել Աստծուն եւ մարդկանց: Հարուստի և աղքատ Ղազարոսի առակը Հարուստը մահանում և ընկնում է դժոխք, իսկ աղքատ Ղազարոսին Աբրահամն է առնում իր գիրկը, դրախտում: Հարուստը խնդրում է, որ Աբրահամը թույլ տա Ղազարոսին՝ օգնելու թեթևացնել իր տանջանքները, սակայն մերժվում է: Երկրային կյանքում հարուստը որևէ կերպ չօգնեց Ղազարոսին, ով նրա ապարանքի դռների մոտ

ողջ կյանքն ապրեց սովատանջ, այլ իր ողջ կարողությունը վատնում էր խրախճանքների ու շվայտ կյանք վարելու վրա։ Տեսնելով, որ ինքն անհուսալի վիճակում է, հարուստը խնդրում է Ղազարոսին հետ ուղարկել, որպեսզի վկայի իր հինգ եղբայրներին դրախտի և դժոխքի մասին, որովհետև հանդերձյալ աշխարհից վերադարձածին նրանք կհավատան եւ կապաշխարեն։ Սակայն Աբրահամը պատասխանեց նրան. «Նորանք Մովսէսին եւ մարգարէներին ունին, թող նորանց լսեն։ Նա էլ ասեց. Ոչ, հայր Աբրահամ, այլ եթե մեռելներից մէկը նորանց մօտ գնայ, կապաշխարեն։ Եւ նորան ասեց. Եթէ Մովսէսին եւ մարգարէներին ականջ չեն դնում, չեն էլ համոզուիլ՝ եթէ մեռելներից մէկը յարութիւն առնէ»։ Ղուկաս 16:29-31 Թզենու առակը «Այս առակն էլ ասեց. Մի մարդ իր այգու մէջ մի թզենի էր տնկել. եւ եկաւ, նորա վերայ պտուղ որոնելու, եւ չգտաւ։ Եւ այգեպանին ասեց. Ահա երեք տարի է, որ գալիս եմ պտուղ որոնելու այդ թզենու վերայ, եւ չեմ գտնում. կտրիր դորան, ինչո՞ւ դա երկիրն էլ խափանէ։ Նա էլ պատասխանեց եւ ասեց. Տէր, այս տարի էլ թող դորան, մինչեւ որ դորա չորս կողմովը փորեմ եւ աղբ ածեմ։ Թերևս պտուղ բերէ, ապա եթէ ոչ, եկող տարի կտրիր դորան»։ Ղուկաս 13:6-9 Այս առակի իմաստն էլ թերևս այն է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի համար յուրաքանչյուր հոգու փրկությունն է կարեւոր։ «Որովհետեւ մարդիկ կլինին ինքնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայհոյիչ, ծնողների անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանսարկու, անժուժկալ, դաժան, անբարեսէր, մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի ցանկասէր, քան թէ աստուածասէր» «Եւ գազանը բռնուեցաւ. եւ նորա հետ սուտ մարգարէն էլ, որ նշաններ էր անում նորա առաջին, որոնցով մոլորեցրեց նորանց, որ գազանի դրոշմն առան» «Եկէք հաւաքուէցեք մեծ Աստուծոյ ընթրիքին, որ ուտէք թագաւորների մարմինները, եւ հազարապետների մարմինները, եւ հզօրների մարմինները» «Եւ իր վերայ հանդերձ էր հագած արիւնով ներկուած, եւ նորա անունն կոչվում է Աստուծոյ Բան» Նա գալիս է հաղթելու՝ չվախենալով պարտությունից, որովհետև Նա արդեն հաղթանակած է «Զգոյշ կաց, մի անիր, ես ծառայակից եմ քեզ եւ քո եղբայրներին, որ Յիսուս Քրիստոսի վկայութիւնն ունին. Տէր Աստուծուն երկրպագիր, որովհետեւ Յիսուսի վկայութիւնը մարգարէութեան հոգին է» Տերը եկեղեցուն հագցնում

է մաքրագույն, նրբահյուս կտորից հագուստ, որը գործված է մեր արցունքներից ու հոգոցներից, մեր ծնրադրումներից, մեր ողորմածությունից… https://hhpress.am/hogevor/2022/12574/

Իրավ է ասված. եթե երբևէ շեղվենք Աստծուն հաճելի ճանապարհից, ապա պետք է խոնարհաբար վերադառնանք մեր երկնային Հոր մոտ, որպեսզի կրկին արժանանանք նրա հավանությանը:

Իսկ հասկանալու համար, թե որն է երրորդ դասը, կարող ենք հոր ջերմ, ներողամիտ վերաբերմունքը համեմատել ավագ որդու դառնասիրտ, անբարյացակամ վերաբերմունքի հետ: Անկասկած, Աստծու ծառաները ցանկանում են ներողամիտ լինել ու ջերմորեն ընդունել այն մարդուն, ով թեև շեղվել է ճշմարտության ճանապարհից, բայց անկեղծորեն զղջում է ու վերադառնում «Հոր մոտ»: Այո՛, այդ ժամանակ մենք պետք է ուրախանանք, որ մեր «եղբայրը մեռած էր և կենդանացավ, կորած էր և գտնվեց»:

Վերոնշյալ առակների վերլուծությամբ համոզվում ենք, որ դրանք առանցքային նշանակություն կարող են ունենալ անհատի աշխարհայացքի ձևավորման հարցում: Առակները հնարավորություն ունեն երեխաներին խթանելու նոր աշխարհներ հայտնաբերելու, արժեքներ ձեռք բերելու և դիդակտիկ և զվարճալի ձևով հասկանալու համար, թե ինչն է ճիշտ և ինչը՝ ոչ: Այս տեսակի պատմությունները նպաստում են երեխաների շրջանում հետաքրքրասիրության արտացոլմանը: Այս կերպ առակները պարունակում են բարոյականություն, որի միջոցով նրանք փորձում են բացահայտել որոշակի վերաբերմունքներ, որոնք այնքան էլ ճիշտ չեն:

Անտարակույս է, որ աստվածաշնչյան աշխարհայեցողությունն առանձնակի կարևորություն ունի մատաղ սերնդի հայրենասիրական, մարդասիրական, գեղագիտական, բարոյահոգեբանական դաստիարակության կազմակերպման գործընթացներում: Յուրաքանչյուր ժամանակաշրջան առաջադրում է մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության կազմակերպման իր խնդիրներն ու նպատակները, եղանակներն ու մեթոդները, ճշգրտում արժեհամակարգային չափանիշները: Սակայն կան չափանիշներ, որոնք միշտ կենսունակ են ու առաջնային ցանկացած

ժամանակաշրջանի համար: Հատկապես մատաղ սերնդի դաստիարակության կազմակերպման գործընթացներում դրանք մշտական են և հույժ կարևոր մեր օրերում: Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում են ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ: Ահա թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը:

Եզրակացություն

Առակի ուսուցումը հանրակրթությունում սերտ աղերս ունի գեղեցիկի արտահայտման, դրա բովանդակային կողմի բացահայտման հետ: Հայտնի է, որ գրականության ուսուցման ընթացքում գեղեցիկի զգացողության ու Ճաշակի ձևավորման համար հատուկ դասաժամեր չեն հատկացվում. այդ նպատակն անբաժան է դասավանդման ամենօրյա գործընթացից: Գեղեցիկի «գաղտնիքը» բովանդակության հետ համատեղված ձևի օրինաչափությունների միահյուսումն է, որը չի կարող նատուրալիզմ կամ, ասենք, ֆորմալիզմ լինել: Այս առումով գրականությունը ապագա անհատի և քաղաքացու արժեքային համակարգը ամբողջացնելու, առավելապես գեղագիտական դաստիարակության անսահման հնարավորություններ է տալիս: Այդ նպատակին ծառայում են նաև առակները, որոնց ուսուցումը և դրանց ուսուցմամբ գրական ունակությունների զարգացումը լավ հիմք, հենման հարթակ կարող են դառնալ ուսուցչի համար հանրակրթական դպրոցում դաստիարարկչական բեղմնական աշխատանք իրականացնելիս: Նշենք, որ աշակերտների մեջ համամարդկային հատկանիշները մշակելու և զարգացնելու գործընթացները չպետք է կապված լինեն միայն գեղարվեստական բնագրերի ուսումնասիրության հետ: Այդ գործընթացները տևական և բազմաբնույթ աշխատանք են պահանջում: Այդ աշխատանքի կարևոր օղակներից մեկն էլ ստեղծագործական ինքնուրույն փորձերի խրախուսումն է, մասնավորապես՝ իր իսկ կողմից ստեղծագործված առակի միջոցով արտահայտել սեփական դիտարկումներն ու մտորումներն աշխարհի մասին, ինչպես նաև հանդես գալ այլաբանական հակիրճ խոսքով, զատել միմյանցից իրականն ու այլաբանականը՝ տարբերակելով գլխավորը երկրորդականից: Նման դիտանկյունից ենք քննում մասնավորապես առասպելավարժության հնարավորությունները, որը ենթադրում է աշակերտներին ոչ միայն քերականություն և ճարտասանություն սովորեցնել, այլև առակներ գրել, սերտել և մեկնել: Գրականությունը, որը միշտ ուղղված է ներկային ու

ապագային, երբեք չպետք է կորցնի իր հիշողությունը և պետք է կարողանա ի մի բերել ժամանակները՝ սկիզբն ու ընթացքը, երեկն ու այսօրը, պատմությունն ու արդիականությունը: Գրականությունը, որը միշտ ուղղված է ներկային ու ապագային, երբեք չպետք է կորցնի իր հիշողությունը և պետք է կարողանա ի մի բերել ժամանակները՝ սկիզբն ու ընթացքը, երեկն ու այսօրը, պատմությունն ու արդիականությունը:

Գրականության ցանկ

1. https://mediamax.am/am/column/12925/
2. Ա. Հ. Սարգսյան, Վ. Միրզոյան, Մշակութաբանություն։ ՈՒս. ձեռնարկ. - Երևան։ Տնտ 1. Բաբանսկի Յու. Կ., Պոբեդանոսցև Գ. Ա., Աշակերտների դաստիարակությանը կոմպլ եքսայ ինմոտեցում, Երևան, 1987թ., 112 էջ։
3. Կոելյո Ֆ. «Բարոյական արժեքները» իմաստների մեջ։
4. Meanings.com կայքում «Բարոյական արժեքների հայեցակարգ»
5. Եզոպոս, Առակներ
6. Աստվածաշունչ, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, 2004թ.